ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ 29-ՐԴ ՉԵՄՊԻՈՆ

ԱՄԵՆ ԻՆՉ ՎՃՌՎԵՑ ՎԵՐՋԻՆ ՊԱՀԻՆ

Եվ այսպես, եզրափակվեց Հայաստանի հերթական 59-րդ առաջնությունը: Այժմ, երբ արդեն լրացված են մրցաշարային աղյուսակի բոլոր վանդակները, վստահորեն կարելի է ասել, որ սա բացառիկ հաջողված առաջնություններից էր, որտեղ առկա էին եւ դրամատիկ պայքարը զարմանահրաշ հանգուցալուծումով, եւ առաջնություններում իրենց նորամուտը նշող պատանիների սենսացիոն հաղթանակները, եւ ստեղծագործական գեղեցիկ ձեռքբերումները:

Հայաստանի նոր չեմպիոնը գրոսմայստեր Կարեն Ասրյանը, թվով 29-րդն է երկրի առաջնությունների պատմության մեջ: Այս հաղթանակը նրան տրվեց անասելի դժվարին պայքարում, ուժերի գերագույն լարումով: Բավական է ասել, որ ողջ առաջնության ընթացքում, կարծես ստվերում մնացած Կարեն Ասրյանը ոչ մի անգամ չգլխավորեց մրցաշարային աղյուսակը: Մի պահ միայն 9-րդ տուրից հետո, նա հայտնվեց առաջատարների եռյակում: Շատ ավելի մեծ ցնցումների ենթարկվեցին այդ եռյակի մյուս երկու անդամները Լեւոն Արոնյանը եւ Արտաշես Մինասյանը: Նրանք երկուսն էլ պայքարի տարբեր հատվածներում միանձնյա գլխավորել են մրցաշարային աղյուսակը, եւ երբ թվացել է, թե չեմպիոնական տիտղոսի հարցն այլեւս կասկածներ չի հարուցում, նրանք երկուսն էլ անսպասելիորեն կրել են 2-ական անընդմեջ պարտություններ:

Ուժերի դասավորությունը վերջին տուրից առաջ այսպիսին էր. 1. Լեւոն Արոնյան 7 միավոր, 2. Կարեն Ասրյան 6.5, 3. Արտաշես Մինասյան 6: Բաղձալի գրոսմայստերական նորման 3-րդ անգամ լրացնելու համար Լեւոնին անհրաժեշտ էր ընդամենը կես միավոր, եւ նա որոշեց ռիսկի չդիմել եւ պարտվելով հաղթանակի վրա չխաղալ բազմափորձ Սմբատ Լպուտյանի հետ: Կարճատեւ այդ պարտիայում կատարվեց ընդամենը 7 քայլ եւ արձանագրվեց ոչ-ոքի: Հայաստանի արդեն նախկին չեմպիոնն էլ հենց առաջինը շնորհավորեց իր պատանի մրցակցին գրոսմայստերական վերջին նորման կատարելու համար: Ճիշտ է, ձեւականորեն Լեւոնը դեռեւս գրոսմայստեր չէ, քանի դեռ ՖԻԴԵ-ն չի վավերացրել այդ կոչումը: Սակայն դե ֆակտո նա կատարել է ՖԻԴԵ-ի բոլոր պահանջները, եւ մենք ուրախությամբ կարող ենք նշել, որ նա դարձավ մինչեւ այժմ շախմատային բարձրագույն այդ տիտղոսը կրելու իրավունք ձեռք բերած շախմատիստներից ամենաերիտասարդը Հայաստանում: Հիշեցնենք, որ Արոնյանի 17 տարին լրացավ հոկտեմբերի 6-ին, իսկ Կարեն Ասրյանը գրոսմայստերական բարձունքը նվաճեց 17 տարեկան, 8 ամսական հասակում: Շնորհավորում ենք այդ առթիվ Լեւոն Արոնյանին, որը վերջին մեկ ամսում 2 անգամ լրացրեց գրոսմայստերի նորման:

Եվ ահա, վերոհիշյալ այդ պարտիայից հետո, Կարեն Ասրյանին Հայաստանի չեմպիոնի կոչում նվաճելու համար անհրաժեշտ էր միայն հաղթանակ իր մրցակից Արա Մինասյանի նկատմամբ: Բայց դա եւս կարող էր բավարար չլինել: Հարցն այն է, որ մրցաշարի կանոնադրության համաձայն, հավասար միավորների դեպքում նախապատվությունը որեւէ մեկին տրվում էր այնպիսի համակարգով, որտեղ վճռական նշանակություն է ստանում տեղերը բաժանած շախմատիստների արդյունքները ետնապահների հետ: Ընթերցողին չծանրաբեռնելով այդ հաշվարկներով, ասենք, որ Լեւոն Արոնյանը չեմպիոն կհռչակվեր միայն այն դեպքում, եթե Տիգրան Նալբանդյանը հաղթեր Վարուժան Հակոբյանին: Սակայն պատանի Վարուժանը, որը մի շարք բովանդակալից պարտիաներ խաղաց այս մրցաշարում, կարողացավ պարտության մատնել իր առավել փորձառու մրցակցին: Դրանից հետո շախմատասերների ուշադրությունը բեւեռվեց ամեն ինչ վճռող հետեւյալ պարտիայի վրա.

Կ. ԱՍՐՅԱՆ - Արա ՄԻՆԱՍՅԱՆ

1.e4 c5 2. Ձf3 d6 3. d4 cd 4. Ձ:d4 Ձf6 5. Ձc3 a6 6. Փe2 e5 7. Ձb3 Փe7 8. 0-0 Փe6 9. f4 Թc7 10. f5 Փc4 11. a4 Ձbd7 12. a5 h6 13. Փe3 0-0 14. Աh1 Նfc8 15. Փ:c4 Թ:c4 16. Թf3 Թc6 17. g4 Ձh7 18. Ձc1 Փg5 19. Ձd3 Փ:e3 20. Թ:e3 Ձdf6 21. Նg1 d5 22. Ձb4 Թd6 23. Ձb:d5 Ձ:d5 24. Ձ:d5 Ն:c2 25. Նad1 Նe8 26. h4 Թc5 27. Թ:c5 Ն:c5 28. g5 hg 29. hg g6 30. f6 Նc2 31. b4 Աh8 32. Ձe7 Նc4 33. Նg4 Նd4 34. Ն:d4 ed 35. Աg2 Նd8 36. Աf2 d3 37. Ձd5 Նe8 38. Աe3 Նe5 39. Ա:d3 Ն:g5 40. Ն:g5 Ձ:g5 41. e5 Ձe6 42. Աe4 Աg8 43. Ձe7+ Աf8 44. Ձc8 Ձd8 45. Ձd6 Ձc6 46. Ձ:b7 Ձ:b4 47. Ձc5 Աe8 48. Աd4 g5 49. Աe4 Ձc6 50. Աd5 g4



51. Ա:c6 g3 52. Ձ:a6 g2 53. Ձc7+, սեւերը հանձնվեցին:

Թերեւս առաջին անգամ այս մրցաշարի ընթացքում հնչեցին բուռն ծափահարություններ 19-ամյա տաղանդավոր պատանու պատվին: Գրոսմայստեր Կարեն Ասրյանն առաջին անգամ նվաճեց Հայաստանի չեմպիոնի պատվավոր կոչումը: Ջերմորեն շնորհավորում ենք նրան, մաղթելով ըստ արժանվույն պահել մեր երկրի մարզական պատիվը միջազգային ասպարեզներում:

Մրցաշարում վերջինն ավարտվեց շատ հուզումնալից Արտաշես Մինասյան-Նադանյան պարտիան: Ի վերջո, խաղի 82-րդ քայլին Հայաստանի քառակի չեմպիոնն ստիպեց անձնատուր լինել իր մրցակցին եւ արժանացավ առաջնության բրոնզե մեդալին:

19:16՝ ՀՕԳՈՒՏ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ

Բացի 3 մրցանակակիրներից, Հայաստանի հաջորդ 60-րդ առաջնությանը մասնակցելու իրավունք ստացան նաեւ միջազգային վարպետներ Արսեն Եղիազարյանը եւ Գաբրիել Սարգսյանը: Արսենին ընդամենը մեկ միավոր չբավականացրեց, որպեսզի 3-րդ անգամ լրացնի գրոսմայստերի նորման: Շախմատասերների համակրանքին արժանացավ 16-ամյա Գաբրիելը, որը մի շարք սենսացիոն հաղթանակների հեղինակ դարձավ: Ուշադրություն դարձրեք աղյուսակին. ամենից շատ միավոր 3 մեդալակիրների հետ պայքարում վաստակել է Գաբրիելը 2,5:

Եվ, ընդհանրապես, այս առաջնությանը խիստ բնորոշ էին պատանի շախմատիստների համարձակ խաղը եւ վարպետության նկատելի աճը: Ուշագրավ է այսպիսի մի փաստ. եթե առաջնության մասնակիցներին պայմանականորեն բաժանենք երկու խմբի, մեկում ընդգրկելով 7 մեծահասակներին, մյուսում վերջերս Երեւանում ավարտված մինչեւ 20 տարեկան պատանիների աշխարհի առաջնության 5 մասնակիցներին (Կարեն Ասրյան, Լեւոն Արոնյան, Գաբրիել Սարգսյան, Վարուժան Հակոբյան եւ Անդրանիկ Մատիկոզյան), ապա պարզ հաշվումներից հետո կտեսնենք, որ 35 պարտիաներից բաղկացած երեւակայական այդ մրցամարտում հաղթանակ են տարել պատանիները 19:16 ընդհանուր հաշվով: Ընդ որում, այստեղ առաջատարը Լեւոն Արոնյանն է, որը 7 մեծահասակների հետ հանդիպումներում վաստակել է 6 միավոր: Թերեւս առաջնության արդյունքները վկայում են այն մասին, որ հայկական շախմատը թեւակոխել է սերնդափոխության շատ հետաքրքիր շրջան եւ մոտ ապագայում կարելի է ակնկալել մեր պատանի շախմատիստների նոր փայլուն նվաճումները:

Առաջնության փակման հանդիսավոր արարողության ժամանակ երեք մրցանակակիրներն առաջին անգամ պարգեւատրվեցին ոսկե, արծաթե եւ բրոնզե մեդալներով: Հանձնվեցին նաեւ դրամական մրցանակներ ինչպես առաջին հնգյակին, այնպես էլ մնացած մասնակիցներին իրենց վաստակած միավորներին համապատասխան (յուրաքանչյուր միավորը 10 հազար դրամ):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ 59-ՐԴ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՂՅՈՒՍԱԿԸ

Տ	Մասնակից	Գ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	Մ
1.	Կարեն ԱՍՐՅԱՆ	2575	■	=	0	=	=	1	1	1	=	1	=	1	7,5
2.	Լեւոն ԱՐՈՆՅԱՆ	2518	=	■	1	1	0	=	1	1	=	0	1	1	7,5
3.	Արտաշես ՄԻՆԱՍՅԱՆ	2600	1	0	■	0	0	=	1	1	1	1	=	1	7
4.	Արսեն ԵՂԻԱԶԱՐՅԱՆ	2504	=	0	1	■	1	1	=	=	=	1	=	0	6,5
5.	Գաբրիել ՍԱՐԳՍՅԱՆ	2470	=	1	1	0	■	1	=	0	0	1	=	=	6
6.	Արա ՄԻՆԱՍՅԱՆ	2483	0	=	=	0	0	■	=	=	=	1	1	1	5,5
7.	Տիգրան ՆԱԼԲԱՆԴՅԱՆ	2445	0	0	0	=	=	=	■	1	1	0	=	1	5
8.	Աշոտ ՆԱԴԱՆՅԱՆ	2410	0	0	0	=	1	=	0	■	1	0	1	1	5
9.	Սմբատ ԼՊՈՒՏՅԱՆ	2625	=	=	0	=	1	=	0	0	■	=	1	0	4,5
10.	Վարուժան ՀԱԿՈԲՅԱՆ	2387	0	1	0	0	0	0	1	1	=	■	=	=	4,5
11.	Մելիքսեթ ԽԱՉԻՅԱՆ	2480	=	0	=	=	=	0	=	0	0	=	■	=	3,5
12.	Անդրանիկ ՄԱՏԻԿՈԶՅԱՆ	2437	0	0	0	1	=	0	0	0	1	=	=	■	3,5

Լուսանկարը՝ Աշոտ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

Հայաստանի չեմպիոն Կարեն Ասրյանը:

ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԸ ՄՏԱԴԻՐ Է ԿՐԿԻՆ ՀԱՆԴԵՍ ԳԱԼ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Փակման արարողությունից հետո մենք փոքրիկ հարցազրույց ունեցանք Հայաստանի նորընծա չեմպիոն Կարեն Ասրյանի հետ:

- Ինչպիսի՞ զգացումներ ունեիր վերջին տուրի պարտիայի ընթացքում:

- Ինչ խոսք, մեծ էր հուզմունքս: Խաղի միջնամասում ստացա դիրքային այնպիսի մեծ առավելություն, որ շատ ավելի վաղ պիտի վճռվեր պարտիայի ելքը: Սխալ էր նավակների փոխանակությունը, որը հնարավորություն տվեց Արա Մինասյանին մինչեւ վերջ պայքարել:

- Ո՞րն ես համարում մրցաշարում խաղացած քո լավագույն պարտիան:

- Հենց այդ վերջին պարտիան, որտեղ, այնուհանդերձ, վերջնախաղում ինձ հաջողվեց գեղեցիկ մտահղացում իրագործել: Բացի այդ, շատ կարեւոր էր նաեւ այդ պարտիայի մարզական կողմը արդյունքի տեսակետից:

- Մրցաշարից առաջ նպատակադրվե՞լ էիր, արդյոք, պայքարել չեմպիոնական կոչման համար:

- Սովորաբար, այդպիսի նպատակներ չեմ դնում իմ առջեւ: Աշխատում եմ լավ խաղալ եւ, ինչքան հնարավոր է, բարձր մարզական արդյունք ցույց տալ, որը թելադրվում է մրցաշարային կոնկրետ իրավիճակով:

- Մոտակա ի՞նչ ծրագրեր ունես:

- Մի քանի օր հանգստանալուց հետո մեկնելու եմ Սանկտ Պետերբուրգ, որտեղ կայանալու է Ռուսաստանի գավաթի նոր խաղարկության առաջին փուլը՝ Չիգորինի հուշամրցաշարը: Այս մրցաշարն ինձ համար շատ կարեւոր է այն առումով, որ այնտեղ ձգտելու եմ իմ վարկանիշը կրկին հասցնել 2600-ի: Բանն այն է, որ միայն այդպիսի վարկանիշով հնարավորություն կստանամ, առանց ընտրական մրցաշարերի կրկին մասնակցել, հաջորդ տարի խաղալ «նոկաուտ» համակարգով աշխարհի առաջնությանը:

- Իսկ որքա՞ն է այժմ քո ընթացիկ վարկանիշը:

- Հայաստանի առաջնությունում ես մի քանի կետով բարձրացրի էլոյի գործակիցս եւ այժմ, իմ հաշվարկներով, այն հավասար է 2592-ի:

Այնուհետեւ երկու հարցով դիմեցինք չեմպիոնի հորը՝ Արարատ Ասրյանին, որը Կարենի մշտական մարզիչն է:

- Իբրեւ Կարենի մարզիչ, ի՞նչն ես ավելի կարեւորում մարզումների ընթացքում:

- Այժմ Կարենի շախմատային մակարդակն այնքան բարձր է, որ իմ դերն ավելի շատ տեսնում եմ նրա հոգեբանական եւ ֆիզիկական պատրաստականության հարցերում: Իհարկե, դրանց հետ մեկտեղ կոնկրետ պարտիայի սկզբնախաղային ընտրությունը եւս կատարվում է իմ անմիջական մասնակցությամբ: Կարենն աշխատասեր է եւ չափազանց ռացիոնալ է օգտագործում իր ժամանակը: Այժմ մեր տրամադրության տակ ունենք «Ֆրից» համակարգչային ծրագիրը, որը շատ հարուստ սկզբնախաղային բազա ունի: Ես այն համոզմունքին եմ, որ այժմ բարձր արդյունքների հասնելու համար երկարատեւ ու համառ աշխատանք է պահանջվում, հատկապես սկզբնախաղային պատրաստականության տեսակետից: Միայն e4 քայլով սկսվող սկզբնախաղերին լրիվ տիրապետելու համար Կարենի հետ մենք աշխատում ենք արդեն 10 տարի:

- Լաս Վեգասում Կարենը պարտվեց միայն Ալեքսանդր Խալիֆմանին: Աշխարհի ապագա չեմպիոնն ինչո՞վ գերազանցեց նրան:

- Եվ դարձյալ սկզբնախաղային ավելի խոր գիտելիքներով: Խաղային մնացած հատկանիշներով, կարծում եմ, Կարենը չէր զիջում նրան:

Մենք հետագա հաջողություններ մաղթեցինք Հայաստանի երիտասարդ չեմպիոնին ու նրա մարզչին: Ավելացնենք, որ այս ամիս մի լուրջ փորձություն էլ է Կարենին սպասում: Նոյեմբերի 27-ին Բաթումում կմեկնարկի Եվրոպայի թիմային առաջնությունը, եւ մեր երկրի հավաքականի կազմում Կարեն Ասրյանը կպաշտպանի Հայաստանի մարզական պատիվը:

Խ. Ա.

	Մասնակիցներ	Մ	Խ	Հ	Ո	Պ	Մեդալներ		
							Ո	Ա	Բ
1.	Կարեն ԱՍՐՅԱՆ	5	54	12	29	13	1	-	-
2.	Լեւոն ԱՐՈՆՅԱՆ	3	34	10	17	7	-	1	-
3.	Արտաշես ՄԻՆԱՍՅԱՆ	14	157	90	50	27	4	2	4
4.	Արսեն ԵՂԻԱԶԱՐՅԱՆ	13	157	56	49	52	-	1	1
5.	Գաբրիել ՍԱՐԳՍՅԱՆ	1	11	4	4	3	-	-	-
6.	Արա ՄԻՆԱՍՅԱՆ	9	89	17	36	36	-	-	-
7.	Տիգրան ՆԱԼԲԱՆԴՅԱՆ	7	77	23	28	26	-	1	1
8.	Աշոտ ՆԱԴԱՆՅԱՆ	3	31	6	9	16	-	-	-
9.	Սմբատ ԼՊՈՒՏՅԱՆ	11	134	60	51	23	3	2	1
10.	Վարուժան ՀԱԿՈԲՅԱՆ	1	11	3	3	5	-	-	-
11.	Մելիքսեթ ԽԱՉԻՅԱՆ	11	125	38	49	38	-	1	-
12.	Անդրանիկ ՄԱՏԻԿՈԶՅԱՆ	1	11	2	3	6	-	-	-

Աղյուսակում ներկայացված են մրցաշարի մասնակիցների Հայաստանի իրենց խաղացած բոլոր առաջնություններում ցույց տված արդյունքները, որը սիրով տրամադրել է Գագիկ ԽԱՆԱՄԻՐՅԱՆԸ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ՉԵՄՊԻՈՆՆԵՐԸ

1.	1934	Հենրիկ Գասպարյան
2.	1938	Հենրիկ Գասպարյան Ալեքսանդր Դոլուխանյան
3.	1939	Ալեքսանդր Դոլուխանյան
4.	1941	Լորիս Քալաշյան Վազգեն Կարապետյան
5.	1945	Ալեքսանդր Քալանթար
6.	1946	Տիգրան Պետրոսյան
7.	1947	Տիգրան Պետրոսյան Հենրիկ Գասպարյան
8.	1948	Տիգրան Պետրոսյան Հենրիկ Գասպարյան
9.	1949	Հենրիկ Գասպարյան
10.	1950	Հենրիկ Գասպարյան
11.	1951	Հենրիկ Գասպարյան
12.	1952	Վլադիմիր Գոլդին
13.	1953	Արծրուն Սարգսյան
14.	1954	Հենրիկ Գասպարյան
15.	1955	Հենրիկ Գասպարյան
16.	1956	Հենրիկ Գասպարյան
17.	1957	Նիկոլայ Մյասնիկով
18.	1958	Էդուարդ Մնացականյան
19.	1959	Էդուարդ Մնացականյան
20.	1960	Էդուարդ Մնացականյան
21.	1961	Վանիկ Զաքարյան Արծրուն Սարգսյան
22.	1962	Էդուարդ Մնացականյան
23.	1963	Ադոլֆ Դեմիրխանյան
24.	1964	Լեւոն Գրիգորյան
25.	1965	Ադոլֆ Դեմիրխանյան
26.	1966	Լեւոն Գրիգորյան
27.	1967	Էդուարդ Մնացականյան
28.	1968	Լեւոն Գրիգորյան
29.	1969	Լեւոն Գրիգորյան Կարեն Գրիգորյան
30.	1970	Կարեն Գրիգորյան
31.	1971	Լեւոն Գրիգորյան
32.	1972	Լեւոն Գրիգորյան Կարեն Գրիգորյան
33.	1973	Ալբերտ Հարությունով
34.	1974	Արշակ Պետրոսյան
35.	1975	Վահագն Ոսկանյան
36.	1976	Արշակ Պետրոսյան Վանիկ Զաքարյան Գագիկ Հակոբյան
37.	1977	Ալբերտ Հարությունով
38.	1978	Սմբատ Լպուտյան
39.	1979	Սլավիկ Մովսիսյան
40.	1980	Սմբատ Լպուտյան
41.	1981	Վլադիմիր Շաքոյան Կարեն Մովսիսյան
42.	1982	Հրաչիկ Թավադյան
43.	1983	Աշոտ Անաստասյան
44.	1984	Վլադիմիր Շաքոյան
45.	1985	Աշոտ Անաստասյան
46.	1986	Աշոտ Անաստասյան
47.	1987	Աշոտ Անաստասյան
48.	1988	Աշոտ Անաստասյան
49.	1989	Արմեն Համբարձումյան
50.	1990	Արտաշես Մինասյան
51.	1991	Սերգեյ Գալդունց
52.	1992	Աշոտ Անաստասյան Արտաշես Մինասյան
53.	1993	Արտաշես Մինասյան
54.	1994	Աշոտ Անաստասյան
55.	1995	Արտաշես Մինասյան
56.	1996	Վլադիմիր Հակոբյան
57.	1997	Վլադիմիր Հակոբյան
58.	1998	Սմբատ Լպուտյան
59.	1999	Կարեն Ասրյան